

14395



ՀԱՆՐԻ ԲՈՐԲՈԽՈ

Յնու
մեղադրութ
եմ

32

F-34

ՊԵՏՎԱՐԱ ԽԱՂՄԱՐԱ ՏԵՇԱ ԺԵՐԵ
ՕԵՐԵՎԱՆ 1933

26 SEP 2006
1 DEC 2009

32
F-34 Այ

101 MAR 2013

ՀԱՅՐԻ ԲԱՐԵՎՈՒԹՅ


ՅԵՍ

324
37

ՄԵՂԱԴՐՈՒՄ

ԵՄ

ՊԵՏՀԱՆԱԿ ՌԱԶՄԱՆԱՏԱՐԱԴԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933



14395

ՅԵՍ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՄ...

Յես մեղադրում եմ պատերազմից հետո մեկը մէռւ
սին հաջորդած ֆրանսիական բոլոր կառավարություն-
ներին այն բանում, վոր նըանք ապաստարան են տվել
հովանավորել են, ոգնություն են ցույց տվել դրդել
են, ֆինանսավորել են ու զինավորել ամեն տեսակի
սպիտակ գվարդիական խմբակցությունների, վոր իրեն-
ցից ներկայացնում են սիջազգային վոճագործների
կազմակերպություն, նպատակ դնելով սպանություն-
ներ կատարել և պատերազմ նախապատրաստել:

Յես մեղադրում եմ այդ կառավարություններին
այն բանում, վոր նըանք պատասխանատվություն են
կրում այն սպանությունների համար, վոր կատարել
են այդ բանդիաները, վորոնց բազմաթիվ խմբակներն
իրենց շոշափուկները տարածում են ամբողջ աշխար-
հում և վորոնք բուն են հյուսել ֆրանսիայում:

Յես նաևանավանդ մեղադրում եմ Տարդ'ելի կառա-
վարությանն այն բանում, վոր նա պատասխանատու լի
ֆրանսիական վոստիկանության հետ կապ ունեցող
սպիտակ գվարդիական Գորգոլուվի կատարած սպա-
նության համար:

Յես մեղադրում եմ Տարդ'ելին այն բանում, վոր նա
առավել հրեշավոր, քան ծիծաղաշարժ կոմերյա յեր
խաղում պրոպագանդայի միջոցով և ձեռնաձու վա-
ճառված մամուլի ոգնությամբ լուրեր տարածելով այն
մասին, իբրև թե Գորգոլուվը բայլշելիկ ե, «Նեռ-բայլ-
շելիկ ե» կամ բայլշելիկների ձեռքին զենք ե, — սոոր
զպարտություն, վորն այնու ամենայիշ ոգտագործ-
վեց բանվոր դասակարգի բոլոր թշնամիների կողմէց-

Յես սպատկանում եմ մարդկանց այն խմբին, վո-

Պետքատի տպարան
Գրավ. 8000 (ր.)
Հրատ. 2432
Պատվ. 3494
Տիրած 3000

Արքագորեց Հ. Սառիկյան

բոնք պատրաստ են վերջին կաթիլ արյունը և իրենց ամբողջ կյանքը զոհել, վորպեսզի մարդկային լայն մասսաները վերջնականապես ազատագրվեն ուրիշ մարդկանց կողմից կեղեքվելուց և հարստահարվելուց։ Յեկ վոչ մի ահարեկություն, վոչ այլ միջոցներ չեն կարող հարկադրել ինձ փոխել իմ կարծիքը, վորը հանդիսանում ե նմանապես և իմ պայքարի զինակից ընկերների կարծիքը։ Բայց ին ընդունակ չեմ յերազանքաները վորպես իրականություն ընդունել և այնպիսի բան ասել, այնպիսի կարծիք հայտնել, վոր ակնհայտնի և ստուգված չինի Խոսքն ինձ համար հանդիսանում ե նաև գործողություն։ Յես կշռադատել եմ այն ամենն, ինչ գրում եմ այժմ։

Յես ընդգծում եմ, վոր իմ առաջադրած մեղադրանքն ընդգեմ միացիալ բանդիտական կազմակերպությունների, վորոնք ձգտում են անհատական ու կոլեկտիվ սպանությունների և վորոնց թեկերը գտնվում են ֆրանսիական զլիսավոր շտարի և կառավարության ձեռքում, տարածվում ե վոչ թե բոլոր եմիգրանտների վրա, այլ միայն եմիգրանտների այն հատուկ կատեգորիայի վրա, վոր իր ձեռքում հսկայական միջոցներ ունի։ Նրանց անպատճի՛ մնալն անհանդուրժելի յե, և մենք չենք հանդուրժի այն։

Յես հիմնավորում եմ կոնկրետ փաստերով մեղադրանքը, վորը ձեակերպում եմ ընդդեմ այն մախինացիաների և հանցագործությունների (վորոնց ցուցակը դեռևս չի վերջացել), կատարված շպիոնների, պրովակատորների և ապաշների բանդայի կողմից, շնորհիվ իշխանությունների անթույլատրելի և խայտառակ հովանավորության։ Այդ փաստերն իրենց ամբողջ պարզությամբ արդեն մի քանի անգամ բերված են

յեղել «Յումանիտեյում», ըստ վորում, նրանցից և վոչ մեկը չի հերքվել։ Յես կրկին բերում եմ այդ փաստերն ընդհանուր գծերով և իրենց ամբողջ անկողմնակալությամբ։

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Կոլցակի, Յուլենիչի, Դենիկինի և Վրանդելի զարբելի սպիտակ բանդաները պաշտոնապես ճանաչելը, նրանց դրամական ոգնությունն ցույց տալը և զենք մատակարարելը, — այդ ամենը հետպատերազմված պատմության մեջ գրված վորոշակի փաստեր են։ Պարոնայք Կլեմանսոնները և Միլերանները ֆրանսիական հարկատուններից հարցուրավոր միլոններ վերցնելով, տվել են Ռուսաստանի վողջ շրջանները հրի ու սրի մատնած այդ թուկից փախածներին։

Յերբ Վրանդելը դուրս շպրտվեց նոր Ռուսաստանից, ֆրանսիական կառավարությունն ամեն միջոց ձեռք առաջ՝ պահպանելու նրա բանակի կադրերը, համաձայն իր ներքին և արտաքին քաղաքականության սոցիալական ռեակցիայի նպատակների։

Սոցիալական և քաղաքական ռեակցիայի այդ ակտիվ կենտրոնի կազմակերպումը՝ պաշտոնական իշխանությունների հովանավորությամբ՝ այնպիսի չափեր ընդդունեց, վորպիսիք դժվար ե պատկերացնել և վորոնք ապշեցրին, — ճշմարիտ ե, միաժամանակ, — պատգամավորների պալատին, յերբ այդ մասին խոսվեց պարլամենտական ամբիոնից, Կուտեսպովի գործի առնչությամբ, ապշեցրին նաև ֆրանսիական հասարակության,

Այս հոդվածը դետեզված ե «Յումանիտեյի» № 12264-ը, 1932 թ. հուլիսի 12-ին։ Տպագրվում ե համաստափական պահանջման համար։

վոր յերեք անգամ, այն և՝ 1930 թվի սեպտեմբերին և 1931 թվի ոգոստոսին ու նոյեմբերին տեսել եր, ինչպես սպիտակ գվարդիական գնդերը զենքը ձեռքին պաշտօնապես համաքաղում եյին հաղթական կամարի մոտով:

«Մուսական համազինվորական միություն», վորի գլխավոր շատրվ, վոր դլավորում և գեներալ Միլլերը, գտնվում և Փարիզում և միավորում և մոտ 15 խոշոր զինվորական կազմակերպություններ և 140 կազմակային խմբակներ: Այդ խոշոր ուազմական ուժը ամեն որ զինվորներ ու լուսնկերներ և հավաքագրում եմիզրանտական յերիտասարդության շարքերում: Գեներալ Միլլերը անգլիական «Բեֆերի» ժուրնալի թղթակցին տված ինտերվյուի մեջ խոստովանել ե, վոր նման ուազմական կազմակերպություն ստեղծել և նրա անհրաժեշտ պարագաները: Հոգալը հնարավոր և յեզել բացառապես «Հնորհիվ Ֆրանսիական կառավարությունների բարեկամական վերաբերունքին: Հարցը վերաբերում և վոչ թե այս կամ այն գաղտնի հաղորդագրություններին: Բավական և կարգալ «Մուսական համազինվորական միության» տեղեկատուի հառաջարանը, հասկանալու համար այդ շարժման չափերն ու ուազմական բնույթը: Նրա նպատակն ե — պատերազմ Մուսաստանի հետ: Իսկ առայժմ նա բոլոր յերկրներում ողնութե վոստիկանությանը՝ կովելու պրոլետարիատի գեմ:

Մի քանի ամիս առաջ գեներալ Միլլերը դիմում կատարեց Յելլոպայում ունեցած իր ուժերի: Լինառտանում, ուր նա կապ և հաստատել լինական գլխավոր շտարի պետ Պիստորի հետ, գեներալ Միլլերին արքայական պատիվակում մատուցվեցին: Այդ պետությունը պետք է գտնա ԽՍՀՄ-ից խլած Զին-Արևելյան լերկաթղթի տերը: Բոգաևսկու կարծիքով «համագինվորական միությունը» կարող էլինի վոտքի հանել 300 հազար մարդ:

Ներում: Բուխարեստում և Ֆրանսիայի վասար բոլոր պետություններում նրան դիմավորեցին, իշխանության պաշտոնական ներկայացուցիչներ ու գեներալներ: Նա հրապարակորեն շնորհակալություն հայտնեց հարավ-սլավական պետության, իրեն արված աշակցության համար և բոլոր այդ ազնազուգված վոսկե ուսագրակիրները, շքեղ համազգեստներ հագած, փառահեղ ժողովներում բացարձակորեն հանդես ելին գալիս ֆրանսիայի հոգանու տակ միասնական ճակատ ստեղծելու ընդեմ ԽՍՀՄ-ի:

Դեներալ Միլլերը հրապարակով հայտարարեց.

«Մենք պատրաստ ենք պատերազմ սկսելու: Մենք սպասում ենք համապատասխան մոմենտի միջազգային դրույյան մեջ յեվ Ֆրանսիական ոգնույյան, վորը տրվելու յե մեզ բայլընիկներին տապալելու ձգտող պետությունը մեկի կողմից»:

Հեռավոր Արմելքում տեղի ունեցող վեցին գեղեցերի կապակցությամբ, Փարիզում գեներալ Դրագոմիրովի նախագահությամբ տեղի ունեցավ գլխավոր շտարի սպաների միության ժողով: Քննության առնվեց ձապոնիայի հարձակմանն ոժանդակելու անհրաժեշտության հարցը և դրա առնչությամբ զեկուցումով հանդես յեկավ Դումայի նախկին անդամ Վոստրոգինը: Դոնի կազակների ատաման Բոգաևսկին հանդես յեկավ հակախորհրդավին բուժերային պետություն ստեղծելու առաջարկով, վորի կազմում պիտի մտնելին Մանջուրիան, Ներքին և Արտաքին Մանդոլիան: Այդ պետությունը պետք է գտնա ԽՍՀՄ-ից խլած Զին-Արևելյան լերկաթղթի տերը: Բոգաևսկու կարծիքով «համագինվորական միությունը» կարող էլինի վոտքի հանել 300 հազար մարդ:

Տարդ'ելի մինիստրության որոք գլխավոր շտաբ-ների և ցարական եմիգրանտների մեջ լեղած կապերն առավել և ամրապնդվեցին, չնորհիվ գեներալ Վելդանի հետ կապված գեներալ Սելլբետկի գործունեյության։ Այդ Սելլբետկն անմիջական դեր եր խաղում Պանար-Լեսոր, Գոչկիս և Շնեյդեր գործարաններին հանձնած ձապոնական ռազմական պատվերներում, և նա բոլոր ռազմական գործարաններում ստեղծեց շորեյկը եխերների կադրեր։

ՄՊԻՏԱԿ ԲԱՆԴԻՏՆԵՐԸ ՀՐԱԶԴՈՒԹՅԱՆ ԵՆ ՎԱՐԺՎՈՒՄ

Ֆրանսիայի հարավում կա մի մեծ քաղաք, — լես շատերից միայն մեկ որինակ եմ վերցնում, — ուր պետական իշխանության մի ամբողջ շարք ֆունկցիաներ բացառապես սպիտակներին և հանձնված։ Որվա մի մասում նրանք լինելով բանվորներ, միշտ ձեռքի տակ ունեն իրենց զենքը և զինվորական հագուստ ու պատրաստ են արձագանքելու իրենց իշխանավորի կոչին։ Ամեն տեղ ռազմական պահեստներ են։ Մի քանի գործարաններ շատ սպիտակ գվարդիական զինվորներ են վարձել և այդ ժամանակավոր բանվորները ֆրանսիական և ոտարազգի իսկական աշխատավորության դրկում են հացից, վերջիններիս դեմ դուրս գալու նշանի սպասելով։

Շնեյդերի գործարաններում աշխատում ե վրանգելյան սպիտակ բանակի մի ամբողջ եսկադրոն, — թորդ կազակյան դրագունյան գնդի մնացորդները։

Սպիտակ պրովակատորների «Ժամապահ» (Կաչօօ) որդանում կարելի յե կարդալ իզեր դեպարտամենտի

ուազմականացնելու վերաբերյալ։ Այդ սպիտակներն ունեն իրենց դպրոցները, իրենց ռազմական գիտության կուրսերը, ակումբներ, կոոպերատիվներ։ Նրանք ունեն ռազմական ակադեմիա, վորը, Միլլերի իր խոկ ասելով, չի կարողանում բավարարել բոլոր ցանկացողնորին, և ուր սովորում են 10 հազար սպիտակ սպաներ (այդ թիվը մատնանշել ե ինքը Միլլերը)։ Մաղմուազել Կոլիզեյ, Միլլե փողոցներում կան հատուկ զինվորական կուրսեր։ Մարդիկ, վորոնք լերազում են ապագայում հրացանազարկ անել ուսւ կամ ֆրանսիացի ժողովրդին, ամեն որ հրաձգության վարժություններ են անում դ'Ալամբեր փողոցում։ Սենա և Ռազի գեպարտամենտում գործարաններից մեկի սպիտակ բանվորներն ամեն կիրակի հրաձգության վարժություններ են անում ֆրանսիական բանակին պատկանող հրաձգալիին դաշտում։ Գրենոբլում սպիտակ գվարդիականներն ունեն իրենց զին վորական հրաձգարանները, իսկ մերձծովյան Ալլա շրջանում նրանք նույնիսկ ռադիոկայան ունեն։

Բայց այդ բանը նկատելի յե վոչ միայն ֆրանսիայում։

Վրանգելի ջախջախվելուց հետո 40 հազար վրանգելյաններ տեղավորվեցին Բալկանյան լեռներում, ըստ վորում նրանցից շատերը պահպանել են իրենց տարազը և շարունակում են իրենց ծառայությունը։ Այդ բանը լես տեսել եմ սեփական աչքերով։ Բելգրադի փողոցներում նրանք հպարտորեն հայտարարում են, վոր իւենք գտնվում են այսեղ վաչ միայն Խօսատանի հետ կովելու համար, այլ յեվ կոտորելու այդ սրիկաներին յեվ բույլ չտալու սերբիական ու բոլգարական պրակտարիա-մին ձեռք բերելու այն, ինչ ձեռք բերեց ուսւական պր-

լետարիատը նախկին ցարական իմպերիայում:

Ուրիշ կենտրոններ կան Շանհայում, Տևանցղինում, Խարբինում, Ճապոնիայում: Գոյություն ունի ուրալու ամուրյան բաժանմունք իր կազրելով Կորեում, Ֆորմոզայում և Խոկկախորյում:

Դեսերալ Միլլերին յենթակա գեներալ Դիտրիխսը դիմում ե Ֆրանս-չինական բանկին Շանհայում՝ դրամ ստանալու միջնորդությամբ: Գեներալ Սմիրնովսկին և ռազմածովայրին սպա Դմիտրեսկին աշխատում են Բալթիկ յերկների ֆրանսիական դեսպանություններում և ոգնում են հակածառաքուզության:

Ֆինլանդայում սենատոր Բելգարդափ վորդին, Եստոնիայում գեներալ Բուեր, Լատվիայում ռազմածովայրին սպա Պոտոլիկինը գեկավարում են սպիտակ գվարդիական ռազմական կազմակերպությունների աշխատանքները:

Նյու-Իորքում ստեղծված ե «Պետրոս Մեծի ընկերություն», Մարտինովի՝ Մուկվայի պահնորդական բաժնի նախկին պետի՝ գլխավորությամբ:

Զմունանք, վոր սպիտակ գվարդիական գինվորական կազմակերպություններ կան նույնիսկ Ավատրալիայում և Հարավսյին Ամերիկայում: 8 հազար սպիտակ գվարդիականներ ծառայում են ոտարելկրյա լիդեռում Մարտիրոյամ և Հնդկա-Չինում:

Միթե կարող ե պետության մեջ այդ պետությունը, այդ հավելյալ պահեստի վոստիկանությունը սերտ կապ չունենալ այս կամ այն յերկրների վոստիկանության հետ, կամ, ավելի ճիշտ, միջազգային վոստիկանության հետ վորովհետեւ ամեն մարդ գիտե, վոր վոստիկանությունն առաջին հերթին զրագվում ե քաղաքական գործունեյությամբ, մինի այդ ֆրանսիական Ռիվ գործարանում աշխատող սպիտակ բանվորներին

հականետախուզությունը, բոլգարական պահնորդական բաժինը, ոռոմինական սիդուրանցան, ոլեհական դեֆենզիվը):

ՈՉԻ ԲՆԵՐ

Բացի «Համազինվորական միություն», զինվորական դպրոցների, զիմավոր շտաբների, լերիտասարգության զորակոչի զուտ ռազմական կազմակերպություններից, բացի կուլտուրական և ֆինանսական կազմակերպությունների, վորոնք յևս այստեղ ամբողջությամբ թվել չեմ կարող—տեղի սղության պատճառով, ցանցի նպատակներից, սպիտակ գվարդիականներն ունեն նաև կազմակերպությունների հատուկ ցանց, վորոնց նպատակն ե ԽՍՀՄ-ի դեմ ուղղված տեղորիսական ակտեր յևս սարություն կատարելը:

Այդ կազմակերպություններն աշխատում են գեներալ Միլլերի շտաբի հետ սերտորեն կապված և ոգտվում են իշխանությունների առատ հովանավորությամբ:

Նախ և առաջ «Ռուսական կենտրոնական միավորությունը»: Այդ կենտրոնական կազմակերպությունը հավաքագրում ե եմիգրանտների շարքերում յեղած բոլոր հակախորհրդային տարրերին և բաշխում ե առաջադրությունները: Միավորության գլուխ կանգնած ե նախկին նախարարների տեր Դուկասովը, վորը հրատակում և «Վերածննդ» (Յօրացածք) որդանը, վորի մեջ ֆորգուլովը տալազրել ե իր կոչերը: «Վերածննդը» տարիների ընթացքում այլ սպիտակ գվարդիական որգանների հետ միասին Յելլրոպայում աղմկալից կտազանիա յի տանում, ձգտելով իրենց տեռո-

բիստական ագիտացիայի ոգնությամբ կոնֆլիկտ առաջ բերել խորհրդային միության հետ:

Ապա գալիս եւ «Երևական ազգային կոմիտե»-ն: Նրա նպատակն եւ «Հինել հավատարիմ զինված պալքարի սկզբունքներին և մշտական կապ պահպանել սպիտակ բանակի հետ: Նրան վոգի ներշնչողը հանդիսանում եւ պրօֆեսոր Կարտասելիր, ոռուսական ամենազգվելի տեսակի յեկեղեցականների քաջալերիչը, Դենիկինի, Վրանգելիի և Կուտեղովի մերձավոր աշխատավիրը:

Բուրյելի, եքս-հեղափոխական, մելոդրամայից վերցրած դավաճանի մի տիպ, տիրահռչակ Իզվոլսկու բարեկամը, սպիտակ տեսորի առաքյալը, վոր մասնակցություն եւ ունեցել մի շարք հակախորհրդային դավադրությունների ու վոստիկանական պրեֆեկտուրայի ու «Սլույտե Ժեներալի» աշխատանքներին, վորոնց աշխատակիցն եւ:

Ինչ վերաբերում եւ Ֆլորորովին, ապա նա կանգնած եւ եմիգրանտական յերիտասարդության մեջ տարվող «գաստիարակչական» աշխատանքի գուլիս: Այդ աշխատանքը ֆինանսավորում եւ Գետերդինը, վորը հրապարակով հայտարարել եւ, վոր նա իր հակասական յեկամուտների մի մասը նվիրաբերել եւ հնարավորին չափ շատ սպիտակ գվարդիական կազմակերպություններ ստեղծելու համար, վորոնց նպատակն եւ խորհրդային իշխանությունը տապալելն ու կապիտալիզմի վերջնական հաղթանակն աշխարհում: Ֆյորորովը «Պայքար Ռուսաստանի համար» (Борьба за Россию) թերթի խմբագիրներից մեկն եւ, վոր ագիտացիա յեւ մղում հոգուտ պողոսի և տեսորի:

Պ. Ազգութեան և Ռուսաստան յեւլ սլավոնականություն» (Россия и славянство) թերթի խմբագիրը տեսոր ու

սարոտաժ և քարոզում: Իր ժամանակ նա վրանգելի մոտ յեղել եւ արտաքին գործերի մինստր: Նա սերտ կապված եւ Միլերանի և ուրիշների հետ ու նրա որդանն ոժանդակություն եւ ստանում չեխական ֆաշիստների առաջնորդ Կրամարժի կողմից:

Նախկին ոռուսական արդյունաբերողների կազմակերպություն՝ «Տորգարոմ» (Торгпром), վոր կատաղի պայքարում եւ ԽՍՀՄ-ը ճանաչելու դեմ, պայքարում և այժմ զինված ինտերվենցիա կազմակերպելու ԽՍՀՄ-ի դեմ: «Տորգարոմի» գլուխ կանգնած են Դենիսովը, Տրեյակովը, իշխան Մեծերովին, Թյաբուժինսկին, Ղուկասովը, Մանրասելիր, Նոբելը, Լիանոզովը — նախկին արդյունաբերողներ ու նալիքանաների սերեր:

«Տորգարոմի» և «Զենիկի սալուզի» հետ կապված փոխադարձ վարկի բանկը զբաղվում է սպիտակ գվարդիական կազմակերպություններին ֆինանսավորելով:

Բոլոր այդ մարդիկ այն մասին են միայն մտածում, վորպեսզի կրկին յետ ստանան իրենց հին գործարաններն ու նավթահանքերը (ի դեպ հիանալի ընկոնատրուկցիալի յենթարկված), արյան մեջ խեղդելով ոռու ժողովրդին: Նրանք խոշորագույն ոժանդակություն են ցույց տալիս սպիտակ բանակին, բոլոր հականեղափոխական անտիսեմիտական խմբակցություններին և բոլոր այդ հրձիգների, մարդասպանների ու կործանարարների լրագրերին: Ֆրանսիական կառավարությունը, մասնավորապես Պուանկարեն, մշտապես սպանչելի ծանոթություն են ունեցել նրանց բանսարկությունների ու դավադրությունների մասին: «Պրուպարտիայի» դատավարության ժամանակ Մոսկվայում, բոլոր այդ վնասարարները խորհրդային դատարանի կողմից մերկացվելով, խոստովանեցին այդ կուսակցու-

թյան ունեցած սերտ կապը ֆրանսիական կառավարության և գլխավոր շտաբի հետ «Տորդպրոմը» սպիտակ կազմակերպություններին և հանձնել 750 հազար կրոն: Նրա այժմյան բյուջետում նշված է 7 միլիոն, բացառապես սպիտակ գվարդիական տեսորիստական բանդաներին ոժանդակելու համար:

Բայց այդ գեռ բոլորը չեն: Դեռ ևս շատ կա, վորցուցակը վերջանա: «Քարարագույն միավետական խօսնություն», «Սրապատկեր», «Կայսերական յերթառարդական միուրյուն», զորի նախագահ Ռուզսկին վոստիկանական պլրեֆեկտուրայի զործակալ ե: «Ռուս զաղքականների կոմիտե» Գենեգո փողոցի վրա, Մակլակովի նախագահությամբ, վորը կիսապաշտոնական դեսպանություն և հանդիսանում, «Համալսարանական յերիտարդուրյան ոգենող ընկերություն», վորին ոժանդակում և Պետերինագը, «ապագա կապիտալիստական Ռուսաստանի համար կազրեր պատրաստելու» նպատակով:

ՍՊԻՏԱԿ ԳՎԱՐԴԻԱԿԱՆ ԿԵՐԵՆՍԿԻՆ

Գոյություն ունի նմանապես և նախկին ժամանակավոր կառավարության զեկավար կերենսկու խմբակը, վոր հրատարակում և «Կեղենված Ռուսաստան» (Угнетенная Россия) և «Ուեր» (Дни) սպիտակ որդանները:

Հիշեցնենք, վոր կերենսկու խմբակը Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ ֆինանսավորվում եր ֆրանսիական զինվորական միստայի կողմից: Այդ խմբակը կազմակերպեց յերկաթողիների սարություն, վորի գլուխ կանգնած եր նախկին

յարական սպա Մ. Թուլիդովի, վորը սերտ կապեր ուներ ֆրանսիական սպաների հետ:

Կերենսկու ծրագիրն է սպայքար մղել ընդեմ ԽՍՀՄ-ի, պայքար, առանց վորև և միջոցի առաջ կանգ առնելու: Թող թեկուզ ամբողջ Ռուսաստանը կովկասի ու Սիրիի հետ միասին, թող հին կոնտինենտի ամբողջ կեսը թալանի ու խորտակման յենթարկվի, միայն թե քրվեն բայց կեները, վորոնք նրա ձեռքից խլել են իշխանությունը:

Ի՞նչ միջոցներ ե առաջարկում կերենսկին: Սպիտակ տեռոր, սարություն և թալանչիական պետությունների ռազմական հարձակում: յերբ ամբողջ կոնտինենտը ավերակ կլինի, այն ժամանակ նա միայն պատրաստ ե վիճաբանել մկուս սպիտակ գվարդիական ֆրակցիաների հետ: Իսկ առայժմ նա սիստեմատիկ կերպով ամբաստանում և սոցիալիստական Ռուսաստանը, այդ բանին համուելու համար զգվելի և հիմար միջոցի դիմելով — հարցուր հաղարավոր փաստերից վերցնելով լոկ նրանք, վորոնք անբարենպաստ տպավորություն են թողնում այժմյան խորհրդային ուժեմի համար: Կերենսկին սպիտակ գվարդիական և — ճիղվիթական դիմակով:

Գոյություն ունի «Պայքար Ռուսաստանի նոմար» տեսորիստական խմբակ, պահնորդական բաժնի գործակալ Բուրցեվի, նախկին մինստր Ֆյոդորովի, նախկին սոցիալիստ Մելգուսովի և ուրիշների զեկավարությունը:

Կա նաև «Ռուսական նեմարտուրյան յեղբարություն», կապիված «Համազինվորական միության» որդան «Վերածնունդի» «Ժամանականի» և Միլիերի շտաբի հետ: Այդ խմբակցությունը գործում է համաձայն լինական

զիսավոր շտաբի լերկրորդ սեկցիայի գերեկտիվների և
ոգտվում ե նրա ֆինանսական ոժանդակությամբ:

Յերբ «Յեղբարությունը» պետք ե հանդես գա տե-
ռորիստական նպատակներ հետապնդող հաղորդագրու-
թյուններով, «Ժամապահը» պատրաստ ե նրա սպա-
սին: Այդ բանում համոզվելու համար բավական ե
կարդալ այդ որդանի մի քանի համարը,

Պետք ե, վերջապես, ասել, վոր բոլոր այդ կազմա-
կերպությունների — միությունների, միավորությունների,
կոմիտեների, տորգավորությունների — շուրջը կան նաև մի
շարք ավելի մանր խմբակներ (նույն թվում նմանա-
պես և սպիտակ ու կարմիր խաչի ալսպես կոչված բա-
րեգործական կազմակերպությունները), վորոնք անմի-
ջականորեն կամ «Համագինվորական միության» մի-
ջոցով կազմած են Փրանսիական զիսավոր շտաբի հետ,
վոստիկանական պրեֆեկտուրայի, «Սյուետ ժեներա-
լի», Տարդ'ելի, Միլ'երանի ու նմանների հետ:

Փարիզյան սպիտակ կենտրոնն իր բաժանմունք-
ներն ունի արտասահմանում: Լեհաստանում կա «Ռու-
սական հեմարտուրյան յեղբարյուրյան» բաժանմունքը,
յեղբարյացած լեհական գլխավոր շտաբի լերկրորդ բաժ-
նի հետ: «Ռուսաստանի համար ակտիվ պայքարողների
խորհուրդներ» կենտրոնն ունի Հարավսլավիալում:
«Ռուս զինօրական պատրիոներ» հանդիսանում են
ռուսական ֆաշիստների կազմակերպությունը Բուլ-
ղարիայում և Հարավ-սլավիայում: «Դյաղացիոնիան
Ռուսաստան» գտնվում է Մանջուրիայում և Հեռավոր
Արևելքում՝ սերտ կապեր ունենալով ծագոնական
հրամանատարության հետ:

„ՍՊԱՆԻՐ... ՅԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԻ ՅԵ
ՈՒՆԵՆՈՒՄ“...

Այսպես ե այդ ցանցը: Այսպես ե նպատակն սպի-
տակ ժամանակամիտի, վորը տարածվել ե ամբողջ աշխար-
հում և մասնավորապես Ֆրանսիայում: Բոլոր կարգին
մարդկանց մեջ հարց ե ծագում: — արդյոք անպատճա-
րեր չե մեծ պետության համար վոչ միայն աշխատակ-
ցել այդ սոսկալի պարագիտի հետ, վոր ձգուում ե
արյան մեջ խեղդել ժողովրդին, այն ժողովրդին, վորի
հետ նույն պետությունը պաշտոնական դիպոմատի-
ական հարաբերությունների մեջ ե, այլ և հանդուր-
ժել այն:

Բայց անցնենք առաջ և ցույց տանք սպիտակ
գվարդիական եմիգրանտների տեսողի խեկան բնույ-
թը, տեռոր, վորը կազմակերպվում ե կառավարական
վոստիկանության և վոստիկանական կառավարություն-
ների աջակցությամբ: Տեսողի այդ քաղաքականու-
թյունը, բացի պատերազմի կոչ լինելուց, արտահայտ-
վել ե մի շարք խորհրդային գործիչների սպանու-
թյամբ: Մենք տեսանք սպանության բացարձակ կո-
չեր, նման այն կոչերին, վորոնցով հրապարակ յեկավ
միտրոպոլիտ Անտոնին: Այդ «սուրբ այլը» 1930 թվի
նոյեմբերին գրում ե:

«Ռուս ժողովուրդ, Կարմիր դեվլը վճռական պայ-
քար ե սկսել մեր հավատի դեմ: Մեր կանքեղը չի
հանգչի: Յելիր ի պատճառուրյուն քիսունեական հա-
վատի: Սպա իր կոմո նիսներին: Զախօջախիր սձի գլու-
խը: Կեհդա՞ի մի բող նայել ոձի նուտերին: Ժողո-
վրդական ենոոր — ահա ուրեն ատվածային»:

Այդ կոչն ունկնդրվեց. Կոնբագին ժեներալ սպա-

324
331

նեց Վորովսկուն, Վարշավայում սպանվեց լիազոր սերկայացուցիչ Վուկովը, Մոսկվայում — Շապոշնիկովը, Տոկիոյում մահափորձ կատարվեց առևտրական սերկայացուցիչ Անդրեյի վրա.

ԱՊԻՏԱԿ ԲԱՆԴԻՏՆԵՐԸ ՓՈԽՈՒՄ ԵՆ ՏԱԿՏԻԿԱՆ

Դրանցից հետո — տակտիկայի փոփոխությունն «Ռուսական կենտրոնական միավորումը» և նրա որդան «Վերածնունդը» քարոզում և մեկնաբանում ելին տերորիստական մեթոդների այդ գործնական փոփոխությունը: Այսուհետև մահափորձերը պիտի ուղղված մնեն վոչ թե խորհրդացին իշխանության սերկայացուցիչների դեմ, այլ այն պետությունների սերկայացուցիչների դեմ, վորոնք դիպլոմատիկական և առևտրական հարաբերությունների մեջ են Ռուսաստանի հետ՝ հարաբերությունները խզելու և պատերազմ առաջ բերելու նպատակով:

Համաձայն տակտիկական այս փոփոխության, Մոսկվայի չեխոսավական դիպլոմատիկական միսիայի խորհրդական Վանեկը անցյալ տարվա դեկտեմբեր ամսին դիմում ե մի քանի խորհրդացին քաղաքացիների, վորոնք, հավաքած տեղեկությունների համաձայն, հականեղափոխականներ են լինում, հրավեր կարկալով նրանց՝ մահափորձ կատարել ԽՍՀՄ-ի ճապոնական դեսպան Խիրոսայի կլանքի դեմ: Վորպես դժու հետևանք սպասվում եր զինված կոնֆլիկտ ճապոնիայի և ԽՍՀՄ-ի մեջ: Յեթե հաշվի առնվի Մանջուրիայի առաջական տված հրամանում: Այդ կուբարասկին արդեն 1928 թվին Մոսկվայում կազմակերպել եր նապանիկավի սպանությունը, վորը ԽՍՀՄ լեկել եր վորպես լեհական դիպլոմատիկական կուրեր, միսիայի անդամ լինելու նրա անձնավորությունը հաստատող փաստաթղթերով:

Քննությունը հայտնաբերեց կուբարասկու ունեցած կազմական գաղանակից դուրս ե, վոր Մոսկվայի ճապոնական դեսպանի սպանության լուրը կայծի դեր կկատարել վառողի տակառում և ծաղրնիացի ու ԽՍՀՄ-ի մեջ կոնֆլիկտ առաջ կերեր: Դրան, անտարակույտ, հետևելու յեր լեհաստանի և Ռումինիայի հարձակումը խորհրդացին արևմտյան սահմանների վրա: Այդ անգամ, սակայն, փորձը անհաջողության մատնվեց, շնորհիվ ՊԲՀ-ի աշալլջության: Խորհրդացին իշխանությունը պահանջեց յետ կանչել վանեկին, վորը և անհապաղ կատարվեց Պրագայի կառվարության կողմից:

1932 թվի մարտի 5-ին սպիտակ գվարդիական Շեերի 5 գնդակ արձակեց գերմանական դեսպանության խորհրդական Ֆոն Տիվարդովիլու ավտոմոբիլի վրա, վիրավորելով նրան ձեռքից ու պարանոցից: Քննությունը պարզեց, ըստ Շտերնը կամենում եր սպանիլ գերմանական դեսպան Ֆոն—Դիրիենսին, վորովհետև այդպես եր ասված լեհացի Լյուբարսկու գլուխվորած տեռորիստական կազմակերպության կողմից նրան տված հրամանում: Այդ կուբարասկին արդեն 1928 թվին Մոսկվայում կազմակերպել եր նապանիկավի սպանությունը, վորը ԽՍՀՄ լեկել եր վորպես լեհական դիպլոմատիկական կուրեր, միսիայի անդամ լինելու նրա անձնավորությունը հաստատող փաստաթղթերով:

Քննությունը հայտնաբերեց կուբարասկու ունեցած կազմական պաշտոնական շրջանների և սպիտակ գվարդիական կազմակերպությունների հետ: Դեսպանի սպանությամբ կամենում ելին դիպլոմատիկական բարդություններ առաջացնել Գերմանիայի և ԽՍՀՄ-ի

մըջ և այդպիսով Գերմանիային հակախորհրդական
փրոնտի մեջ գրավել.

ՍՏՈՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռազմական այս տակտիկան մշակվել է վոչ թե Պատրլայում, վոչ թե գաղտնի խորհրդակցություններում, այլ սպիտակ գվարդիական բանդիտները միանգամայն բաց կերպով վորոշեցին գիտակցաբար և բացարձակորեն դուրս գալ այն յերկրների ականավոր քաղաքացիների գեմ, ուր ապրում եին իրենք և ուր ներքին գործերի մինհստրությանը լենթակա վոստիկանությունը, իր հերթին սպասարկելով հետադիմական կապիտալիզմի շահերին, ամեն տեսակ հնարավորություններ եր ընձեռում նրանց՝ աշխատելու և ուռաճանալու:

Ցեթե մեեք կամենում ենք մեղադրական ակտ կազմել, ապա գրա համար նյութ տալիս են սպիտակ գվարդիականներին իրենց հայտարարությունները, Ֆրանսիական և միջազգային սպիտակ մամուլի կոմենտարիաները վառ լուս են սփռում այդ նպատակադրման վրա — պրովակացիալի լենթարկել և ոգտագործել ականավոր ոտարերկրացիների սպանությունը, վորպես քաղաքական պալքարի միջոց:

«Ներենք — սիմվոլիկ դեմք ե — գրում ե «Վերածնունդը» (Յօդրօյդենի) ապրիլի 29-ի համարում: Ներենք — դա սկսվող տեսուն ե: Մի քանի որ անց լրագիրը վերադառնում ե նույն այդ խնդրին յեվ դրում ե: «Ներենի արձակած գնդակը լսվել ե, յեվ նա կդրինվի: Ներենի արձակած գնդակը — դա վոչ թե վերջավորությունն ե, այլ սկիզբը, Վորպեսզի վոչ մի

կասկած չինի լրագիրն ամելացնում ե. Ներենի արտքն իր տեսակի մի քայլ ե, ուղղված ոտարեկրացիների կողմից բայլենվիկներին ցույց տված ոգնուրյան դեմք»:

«Մուսական կենտրոնական միավորման» կարեռ ժողովի հաշվետվությունը, հրապարակված ապրիլի 26-ի թվում, առավել վորոշակի կերպով հայտարարում և նախատեսնվող մահափորձերի մասին, հետեւալ կերպ պատճառաբանելով.

«Բոլոր գրաւցներում միանգամայն նոր տն ե զգացվում եմիգրանտների շարերում: Կարելի յե մտածել, վոր այդ նոր տներ նետելանիք ե ինչ վոր մի նոր բանի, վոր իրականանում ե Ներենի արձակած գնդակի կապակցությամբ. Այդ կրակոցները ցույց են տալիս խորհրդային իշխանությանն աջակցող բոլոր ուսարեկրացիներին այն պատասխանաւորությունը, վոր սպասում ե նրանց: Ներենը բանգ ե մեզ նամար, Մեզ համար բանգ ե ամեն վոք, Ու Մուսասահից դուրս աջակից կլինի խորհրդային իշխանությունը տապալելուն: Ներենի ակտը — դա պատմական բվական ե: Պետք ե զործել սկսել յեվ մենք ենք, եմիգրանտներս, վոր պետք ե նախամարտիկի դեր կատարենք»:

Բաժանովը բացականչում ե այդ ժողովում.

«Մուսաների թեսումին նա յե, ով աջակցում ե խորհրդային իշխանության, յեվ նման ոտարեկրացիները փոռու կվերածվեն»:

Ցեվ այդպես, թող վոչնչանան դեսպաններն ու առաջնորդները պետությունների, միայն թե պատերազմ սկսվի, թող վոչնչանան 160 միլիոն բանվորներն ու գյուղացիները սոցիալիստական հանրապետությունների, միաւն թե կրկին յետ ստանան իրենց մեծա-

րանքներն ու հարստությունները պարոնալք եմի-
գրանտները, թող ավերակների վերածվի յերկիրը, ուր
այժմ ստեղծվում ե սոցիալիստական քաղաքակրթու-
թյուն:

Առավել անկեղծ է, յեթե ալդ հնարավոր է, «բոլոր
ուսւնենի վեհ հոգիներով, Շտերնի վոգով տողորդի-
լու» դիմումը: «Վերածնունդի» խմբագիրներից մեկը,
Յարլոնզակին, Ռիգայում լույս տեսնող «Այսոր» (Се-
годня) թերթում ավելի վորոշակի յե շեշտում ալդ:

«Ներենի արարք հսկայական տպավորություն գոր-
ծեց ամբողջ աշխարհում: Թա նշանակում է ուսւս տեսու-
րիսների տակտիկայի փոփոխություն, Ալդ փոփոխու-
թյան բաղական իմաստը կարելի յե նաև գեցնել նե-
տելվալ բառերին. «Մի կրակեցեք բայլեւիլիյան ճրե-
նողուկների վրա. Մեզ համար տահավետ է, ամեն կադ-
մից տահավետ է փոխել նշանակեար յեկ խփել ուսա-
երկրացիներին. Նշանավոր ուսարերկրացու վրա ար-
ձակած գնդակը բայլեւիլիկներին ամելի մեծ յեկ լուրջ
անախորժություններ կարող է պատճռել յեկ նոյնա-
խոկ բաղական բարդար ըլուներ առաջացնել».

Ի՞նչ է ասում Կերենսկու որդան «Որեր» թերթը
ուսարերկրաց դեսպանի վրա կատարված մահափորձի
առթիվ:

«Մենք մեր առաջ ունենք անձնազն տեսարիստա-
կան գործադրյան կլասիկ որինակ, վոր կատարիած
ե ժողովրդի իրավունքները պահպանելու նպատակով.
Ներենք միայնակ չե: Անհատական տեսորի նուրբ
բարբորիամ է»:

Խորհրդացին Ռուսաստանի հետ պատերազմի մեջ
չմնելը նշանակում է չարաչար վիրավորել ինաշնիվ
ուսարերկրաց պետությունների ապրող եմիգրանտնե-

րին, և դրա համար մա; Ե սահմանված:

«Վիրավորված ազգային նպարտության խսայած
զգացումն իր արտացոլումը գտավ Ներենի կրակոց-
ներում... Ներենի կրակոցը հնչեց հավանութեն բավա-
կահ բարձր ու ազդու հնգամյակը ստեղծող տաս ու
տաս ուսարերկրաց արտերում: Թող նրանի, ում հարկ է,
լավ լսեն այն (կրակոցը), բայի դեռ ուժ չե».

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՑ ԿՈՉ

Բոլոր այս մեջ բերությունները նույն բանն են կը բ-
նում: Այն գաղափարը, վոր քարոզում են նրանք,
ալն ե ոտարերկրացիների սպանություն, ալնքան ե
պտտվում ողում, վոր ցարական գրող Լովիչն իր վե-
պում, հրապարակված ապրիլին խարբինում, «Ռուսոր»
(փող) լրագրում, բերում ե ականավոր քաղաքական
գործիչների (նույն թվում նաև ֆրանսիական հանրա-
պետության պրեզիդենտի) սպանությունների մի ամ-
բողջ շարք՝ կատարված սպիտակ գվարդիականների
կողմից: Այդ սպանությունները նկարագրված են այն-
պիսի մանրամասնություններով, վորոնք պետք ե զար-
մանք պատճառեն բոլոր նրանց, ովքեր իրազեկ չեն
իեղել այդ նախապատրաստական «գրականության»:

Սպանությունների և արյունոտ յելոյթների ամ-
բողջ շարք կոչեր տարածվել են «զեմոկը ատական»
յերկրներում, տարածվել են միանգամայն անպատճե-
ալն ժամանակ, յերբ հասարակության բոլոր անդամ-
ների ուցինալ աշխատակցության հիման վրա ար-
ված կոմունիստական սովորական պահանջները հրա-
պարակելու համար իշխանությունները բանտ են նե-
տեր խոշտանգել են, ոպանել:

Բարի ֆրանսիական հասարակություն, վոր դեռ հավատում են Պուանկարեին ու Տարդ'ելին այնպես, ինչպես կուրորեն հավատում ելիր և Ռոշետիին և Ուատրիկին և հավատալու լես նրանց հաջորդներին։ Ականջ դիր այն բանին, ինչ բացահայտ կերպով արտահայտվել ե այստեղ ֆրանսիայում, ուր դու, բոլոր սահմաններն անցած միամտությամբ լերեակացում ես, իբր քեզ դեկավարում են լոյալ մարդիկ, մարդիկ, վորոնք պաշտպանում են հանրապետությունը և խաղաղությունը։ Բացականչիր ինձ հետ միասին, վոր ժամանակակից ամբողջ պատմության մեջ չի կարելի գտնել առավել բացահատ պրովակացիաներ, առավել բացարձակ ու ստոր նախապատրաստություն այն մարդկանց սպանության, վորոնք խոշոր դեր են կատարում լերկրի կյանքում նրա համար, վորպեսզի հետո միլոնավոր զինվորների սպանդ կազմակերպեն։

ՊՐՈՎԱԿԱՑԻԱ ՄԱՆՉՈՒՐԻԱՅՈՒՄ

Հայտնի յե այն դերը, վոր խաղում են Հեռավոր Արևելքում սպիտակ գվարդիական բանդաները, ձըդտելով պրովակացիայի լենթարկել ԽՍՀՄ-ը ծավոնիայի հետ պատերազմելու։ Մենք գիտենք զինված հարձակումներ խորհրդային հիմնարկների վրա Մանչուրիայում, սաբուտածի ակտերի մասին Չին-Արևելյան լերկաթուղարծում, կամուրջների վոչնչացումներ և այլն խորհրդային տերիտորիայում։ Ո՞վ կհավատա, վոր այդ բանվորական պրոպագանդան, վոր կատարվում ե զեներալ Միլլերի Փարիզում լեղած գլխավոր շտաբի անմիջական դեկավարությամբ, խարբինյան ներկայացուցիչ գեներալ Դիտրիխսի միջոցով, հնարա-

վոր կլիներ առանց ճապոնական իմպերիալիստական տարրերի և այլ պետությունների աջակցության։ Այդ խաղերը 1929 թվին զինված կոնֆլիկտ առաջ բերեցին մի կողմից իմպերիալիստական պետությունների ծառայության մեջ գտնվող չինական գեներալների և մյուս կողմից՝ խորհրդային միության մեջ, Շնորհիվ խորհրդային դիվլոմատիայի և խորհրդային կառավարության սառնարյունության և խաղաղություն պահպանելու խկական ցանկության, այդ կոնֆլիկտը պատերազմի չփոխվեց։ Սպիտակների բանդիտիկման իր նպատակին չհասավ։ Սակայն լերկար ժամանակով արդյոք այն ջլատվեց։

Նրանք, ովքեր կամենում են հանցագործությունների միջոցով սպանդ առաջ բերել, ափսոսում են կորցրցած ժամանակի համար։ «Նաբատը» 1932 թ. փետրվարի 12. ին գրում ե.

«Պետք ե սկսել անել այն, ինչ պետք եր անել 14 տարի առաջ, — սրբազն պատերազմ սկսել սատանայի դիմ։ Մենք պետք ե վոչ միայն սրբազն պատերազմ սկսենք, այլ յեվ դիվային կոտորած։»

«Նաբատ»-ը գտնվում ե վոստիկանական պրեֆեկտուրայի հսկողության տակ, և նրա հետ կապը պահպանում ե «Սլուրտե Ժեներալի» դործակալ կրուչ-կովը, վոր գտնվում ե կամիսար Բիտելիտրա մագրության տակ։

Սակայն հարկավիր են արդյոք բոլոր այս մանրամասնությունները։ Յեթե անգամ չիներ այս «գործի կապերը» քրանսիական վոստիկանության և սպիտակ կապերը գվարդիական եմիգրացիայի մեջ, վոր կազմակերպված գվարդիական դիվային պարագաներով, միթե պարզ չե, վոր վոստիկանությունը և Տարդ'ելի կառավարու-

թլունը սքանչելի կերպով իրազեկ ելին ալդչափ պարզորոշ արտահայտած տրամադրության, վորը պետք է տարմաբանորեն հանդեցներ Գորգուլովի կատարած մահափոքձին:

Ահա ինչու լես մեղադրում եմ Տարդ'ելին և վոստիկանության շեֆ Կյապպին այն բանում, վոր նրանք փաստորեն հանդիսանում են հանրապետության նախագահ Դումերի սպանության համախոհները:

ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՍԽԱՆ

Վերադառնանք սակայն մի քանի ընդհանուր փաստերի, վորոնք թեպետ և պարզ են շատերի համար՝ այժման դեպքերից հետո, բայց և այնպես անդիտացվում են դեռ «հասարակական կարծիքի» կողմից, մի կարծիք, վորը մատուցվում ե ամեն տեսակի համեմունքներով և վորը թույլ ե տալիս իրեն ալգոկես խարել: Մեծ պետությունները լերեք չկարողացան ճռնաչել ԽՍՀՄ-ը, վորը 1917 թվից ձգտում ե սոցիալիզմ կառուցել: Աշխարհի այդ վեցերորդ մասի իդեալները, ամենից հետամնաց ու ստրկացած այդ լերերի, վոր այժմ ընթանում ե մարդկության հարազատ զարգացման գլուխ անցած և կառուցում ե իրավահավասար պրոլետարական հասարակություն, դասակարգերը վոչնչացնելու պայքարում, ամբողջ աշխարհին թվում եր, և միանգամայն իրավացիորեն, ինչ վոր ճակատագրական՝ հանդեպ կապիտալիզմի հիմնական սկզբունքների, վոր հիմնված ե մարդը մարդուն շահագործելու վրա: Այդ սոցիալիստական և քաղաքական թշնամանքը չեր դադարում լերևան գալ զանազան ձևերով, վոր սկզբում արտահյատվեց վորպես զինված

ինտերվենցիա, անտեսական բլոկադա, ծայրամասային պետություններ ստեղծելով՝ նրանց ուժեղացնելով, վորոնց վերածնունդը կամ ընդարձակվելը հետևանք ելին վոչ թե լիբերալ աշխարհականացքների, այլ միջազգային վոստիկանական նկատառությունների բնույթ ելին կրում:

Ժամանակի ընթացքում կապիտալիստական լերերները, սակայն, հասկացան, վոր իրենց շահերի տեսակետից իսկ նպատակավոր ե ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերություններ սկսելը, իսկ հակախորհրդային կամպանիան ստացավ այլ բնույթ, ավելի գաղտնի ձևեր սարոտածի, զպիոնաժի և զրպարտության:

Ըսդդեմ ամբողջ աշխարհում աճող պրոլետարական ինտերնացիոնալի հանդես լեկան այլ համաշխարհային կազմակերպություններ — ֆաշիզմ, սպիտակ կամ սև ինտերնացիոնալներ, վոստիկանություն, վորը կարող ե առանց արգելքի կամպանիա մղել նաև խաղաղ ժամանակ, և բոլոր այդ կազմակերպությունները գործում ելին լայն ֆինանսական ոժանդակություն ստանալով կապիտալիստներից:

Բայց այն չափով, ինչ չափով նոր պետության մարդկային և տրամարանական սկզբունքների աղդաբարությունը ուղեցվելում եր խոշոր տնտեսական նվազաւմներով և անընդհատ վերելքով, համաշխարհային կապիտալիզմի վողբերգական անկման հետ միաժամանակ, այն ժամանակ, լերը ԽՍՀՄ-ում գործազրկության վերացման հետ միաժամանակ աճում եր գործազրկությունը կապիտալիստական յերկրներում՝ վերջիններիս ավելի ու ավելի խորը վերքեր պատճառելով, թշնամանքը գեղին ագրեսիվ բնույթ ստացավ:

ՊԱՏԵՐԱՋՄ ԱՌԱՋ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Զրպարտության ուժեղացումը, լեզենդան հարկա-
դիր աշխատանքի, գեմալինդի մասին, վաճառված ժողո-
վական ժեռնունի խեղկատակալին պատմություն-
ները և այլն, այդ ամենը վոչ միայն հնարովի ին,
այլ և կատարելապես հակասական են իրականության:
Այդ պրոպագանդան, վոր սկսված և համաշխարհային
մասշտաբով և նպատակ ունի խղման համար հասա-
րակական կարծիք նախապատրաստել, մինչև որս դեմ
և առել Խորհրդային միության խաղաղություն պահ-
պանելու անխախտ ձգտման: Դուրս յեկավ, վոր սահ-
փորա-գյուղացիական պետությունը, «ատամներում գա-
նակ ունեցող մարդկանց» յերկիրը աշխարհում միակ
պացիֆիստական պետությունն ե:

Նախ և առաջ, շնորհիվ «աշխատանքը բոլորի համար»
սկզբունքների, ընդհանուր աշխատակցության, արտա-
դրական ջանքերի և աշխատանքի արտադրանքի ու-
ղիղությալ բաշխման, շնորհիվ իր ամբողջ արդարացի,
պարզ, անթերի մեխանիզմի, ապա շնորհիվ իր ընդհանուր
զինաթափման առաջարկների, վորը նրա ներկայացու-
ցիչները չեն դադարում պաշտպանել համաշխարհին կոն-
գրեսներում Շնորհիվ լայն տնտեսական աշխատակցու-
թյան իր առաջարկի (միմյանց վրա չարձակվելու տնտե-
սական պրոեկտը), շնորհիվ հարկան յերկրների հետ
կնքած պայմանագրերի՝ բոլոր կոնֆլիկտները խաղաղ
միջոցներով լուծելու վերաբերյալ: Յեկ վերջապես,
շնորհիվ իր վճռականության՝ յելութների պրովակա-
ցիաների չենթարկվելու, վորոնք կարող են այնպիսի
գրություն ստեղծել, վորից դժվար կլինի յելք գտնել:

Այդ պրոպագանդան դիմադրության և հանդիպում
նաև բանվոր դասակարգի կազմակերպված մասի կող-

մից, վոր ավելի ու ավել քիչ և տրամադրիր կոմունիս-
տական Ծուսաստանի դեմ դուրս գալ: Այդ պատճա-
ռով հարկավոր և խորամանկության դիմել, վորպեսզի
յերկրները մեկը մյուսի լետեկից կատարված փաստի
առաջ դրվեն: Սպիտակ հմիզըանաների ալդ կլիկան,
վոր ականավոր մարդկանց սպանության հրամաններ
և արձակում, վորպեսզի պատերազմ առաջ բերի, կա-
տարում և իմալերիալիստական մեծ պետությունների
պլանները: Նման սպանությունները կարող են հիմք
ծառայել նոր գրգռումների, և պանուրզյան վոչխար-
ները*), վորոնց թիվը այնչափ շատ և մեր, այսպիս
ասած, ազատ յերկրներում, արձագանք կտան վաճառ-
ված մամուլի կոչին: Պարագոքս չի լինի, յեթե
ասենք, վոր յերկու կողմեց ել կապված են միմյանց
հետ ընդհանուր շահերով: Յես մերկացնում եմ այստեղ
այդ զգվելի համաձայնությունները, այդ հանցագործ
ոժանդակությունը նրա համար, վորպեսզի բաց անեմ
իմ հայրենակիցների աշքերը, վորոնք հաշիվ չեն տա-
լիս իրենց ստեղծված դրության մասին: Յես գիտեմ,
վոր վոչ մի նոր բան չեմ հաղորդում ինքորմացիաներ
ունեցող մարդկանց, վորոնք իրազեկ են միջազգային
քաղաքականության կուրսին և նրանց, վորոնք առաջ
են բերել այդ քաղաքականությունը:

ԿՈՐԳՈՒԼՈՎԸ — ՍՊԻՏԱԿ ԳՎԱՐԴԻԱԿԱՆ Ե

1932 թվի մայիսի 6-ին, ֆրանսիական վոստիկա-
նությանը քաջ հայտնի Գորգուլովն առանց վորև
գժվարությունների, մոտեցավ պրեզիդենտ Դումերին,
վոր առանց պահապանների հսկողության եր և մահա-

*) Այսէնքն, վոչխարամիտ մարդիկ: Տ. թ.

շու վիրավորեց նրան՝ դևմղիմաց կլոակելով։ Վկան,
քաջ հայտնի ժուրնալիստ Ժակ Մորտանը հայտարա-
րել է, վոր առաջին և յերկրորդ կրակոցների մեջ ան-
ցավ վոչ պակաս քան 10-15 վարկան, կորդ ֆարբե-
րի կինը մատնանշել է Հիշարին Գորգուլովի կասկա-
ծելի ընթացքի մասին, վորը նկատվել է նաև ուրիշ-
ների կողմից։ Հիշարը հրաժարվել է նրան ձերբակալել,
անտարակուս այն պատճառով, վոր նրան ճանաչե-
մու և յեղել։ Նա ընթանում եր պրեզիդենտի առջևից՝
նրա համար ճանապարհ բացելու բազմության մեջ, վո-
րի թիվը, համաձայն բոլոր տվյալների, մեծաքանակ
չել յեղել։ Միանգամայն ակնահայտնի լե, վոր ձեռք
առնված չեն յեղել նախագրուշական տարրական մի-
ջոցներ, վորոնց մասին վոստիկանությունը սովորա-
բար յերբեք չել մոռանում։ Առաջին խոսքը, վոր ասել
է մարդասպանը կրակելուց հետո, յեղել ե. «Յես կա-
մենում եյի հարկադրել ֆրանսիային կոնֆլիկտի մեջ
մտնել Ռուսաստանի հետ»։ Այդ բառերում իր պարզ
արտահայտումն ե գտնում այն պրոպագանդան, վորը
վաղուց արդեն վարում են սպիտակներն իրենց լրա-
զրերում։

Վորպեսզի Գորգուլովի սպանությունն իր նպատա-
կին հասներ, հարկավոր եր, ինչ ուզում է լինի, նրան
բայց կամ բայց կիների կողմանից դուրս բերել.
Այդ զաղրելի խարերայության անհրաժեշտության
առաջին ցուցմունքը արվեց Տարդելի պաշտոնական
հաղորդագրության մեջ։ Դեպքերի ընթացքն այսպես
ե. մարդասպանի առաջին հայտարարությունները
միանգամյան նորմալ են։ Այդ հայտարարությունները
հաղորդվեցին մայիսի 6-ի յերեկոյան և նույնիսկ մա-
յիսի 7-ի առավոտյան մի քանի լրագրերում։ բայց

այստեղ պաշտոնական դեկավարները Գորգուլովի լե-
լուցիցը ոգտագործելու անհրաժեշտության լողունգ են
տալիս — հնարավոր դիպլոմատիկական ինցիդենտը և
բարդությունները կարող են առաջ բերել հակամոր-
հրդագին կամպանիա և, պետք է հուսալ, պատերազմ։
Այս ինչու Տարդեն զայրացած եր լրադրերի առաջին
հաղորդագրություններից և մի խոշոր ժուռնալիստի
շնորհեց, վորի սխալը կայանում եր այն բանում, վոր
նա ճշմարտությունն եր ասել։ Ժուռնալիստներին հե-
ռացրին վոստիկանական թաղամասերից, ուր նրանք
կարող եյին հարցաքննության արդյունքների
մասին ճիշտ տեղեկություններ ստանալ։ Ներքին
գործերի մինիստրը, ամենենին հաշվի չառնելով Գորգու-
լովի հայտարարությունը, առաջին հաղորդագրությամբ
դուրս բերեց նրան վորպես անարխիստ և վոչ այնքան
նորմալ մարդ։ Ցերեկույտ նոր հայտարարություն։
Տարդեն հաղորդում ե, ամենենին հաշվի չառնելով իր
առաջին հայտարարություններն ու մարդասպանի
ասածները, վոր Գորգուլովը ներբայցելի ե։

Մամուլի վորոշ որգաններ մեծ աղմուկով սկսում
են համախատասխան կամպանիա։ «Լիբերտեն» գրում
ե. «Ճեղափոխությունը գործի յեւ։ Ունեգատ և դափա-
ճան Միլերանը, քաղաքական ասպարեզի ամենից ար-
համարելի դեմքերից մեկը, ցինիկաբար հայտար-
արում ե։

«Իմ ստացած անձնական տեղեկություններն ասում
են, վոր մարդասպանը պատկանում է բայլեվլիկյան
ուեգույտ ուժերի բվին» («Ենթաճնիման», մայիսի
7-ին)։

Անդիքական խոշոր որգան «Թայմսը», վորին հեղա-
փոխական սիմպատիաների մեջ կասկածելու առիթ

չկա, գրում ե. «Մարդասպանը հայտարարել ե, վորինքը ոռւսական ֆաշիստ ե, բայց վորովհետև Ֆրանսիան գոնվում ե ընտրությունների նախորյակին, ապա շատ լրագրեր կամենում են նրան դուրս բերել վորպես կոմունիստ նրա համար, վորպեսզի ազգարնակությունը վոտքի հանեն ալդ կուսակցության ղեմք, նրա մեջ վորոշ ճամարտություն կա, բայց իմպերիալիստների ու նրանց գործակալների նպատակները նախընտրական կամպանիայի շրջանակներից շատ ավելի հեռու լե գնում: Սուտ լեզենդը տարածվում ե հետագայում ևս, չնայած այն բանին, վոր Գորգուլովը լերբեք չի փոխում իր ցուցմունքները: Գուստավ Երվեն գրում ե. «Վիկտորյառում. «Միայն շնորհիվ այն վախկության, վորը ցուցաբերում ենք մենք հանդեպ Մոսկվալի հանցագործությունների, խեղճը կամեցել ե պատճել ֆրանսիական հանրապետության պաշտոնական ներկայացուցչին»:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՎՈՐԸ ԿԱՏԱՐՎԵՑ ՓԱՍՏԵՐԸ ԽԵՂԱԹՅՈՒՐԵԼՈՒ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Քննությունը կաաարվում ե միակողմանի և շտագ: Մի ամբողջ շարք անիմաստ հակասական ցուցմունքներ տրվեց այնպիսի մարդկանց կողմից, վորոնք հանկարծ հրապարակ լեկան ալդ մոմենտին (որինակ, Գորգուլովի չեխո-սլավական կոմկուսակցության պատկանելու վերսլան, այն ինչ նա պատկանել ե չեխո-սլովական սոցիալ-դեմոկրատական կուսակցության և այլն):

Բնորոշ ե, վոր քննիչ Ֆուժերին անձնական հարաբերություն ե պահպանում սպիտակ դվարդիա-

կանների հետ, թույլ ե տվել նրանց իր շքեղ վելայում մատուռ կառուցել, ուր հավաքվում ելին նրանք, համակրական վերաբերմունք եր ցուց տալիս նրանց: Զարմանալի չե, վոր նա չեր վորոնում Դումերի սպանության իսկական և այնքան ակնհաւտնի պատճառները:

Մեծ զգիւլի մամուլը, վոր ամեն հիմք ունի ստելու պրոլետարիատին, ամբողջությամբ պաշտպանում եր Տարդ'ելին, «Փուրեալը», «Ամիր դյու պեպլը», «Փարենալ Դե Դեբան», «Ենտրանսիժանը», «Լիբերտեն», «Եկո դե պարին» ընթանում ելին հակախորհրդալին զգիւլի, զրպարտիչ կամպանիալի առաջին շարքերում: Նրանք լենում ելին այն բանից, վոր առաջին հերթին հարկավոր ե ավելի շատ զրպարտել, վորովհետև, համաձայն ժուրնալիստիկալի ասպարեզում՝իրենց մեծ ուսուցչի ուսմունքի, զրպարտությունից միշտ մի բան մնում ե. վորովհետև գործը անսախատեսելի ընթացք ստացավ, ապա վոստիկանությունը հանդես յեկավ, հայտարարելով, վոր Գորգուլովը գործում ե միանգամայն ինքնուրույն, մի բան, վոր հակասական ե ալդ սպիտակ բանդիտի վողջ գործունելության: Մատնանշենք մի հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ ե դարձը Տարդ'ելի և նրա վոստիկանների նահանջը ակնահայտ փաստերի առաջ, «Ենդեպանդան Բելլժը», վոր հնարել եր Գորգուլովի ունեցած կապը բերդիական կոմունիստների հետ, հարկադրված եր հրապարակել Բելգիական վառիկանուրյան պահտնական ներքումը:

ԿԱՊԸ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՅԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Գորգուլովը, զուցե, անասուն և, բայց համենայն դեպս, սպիտակ գվարդիական անասունն Անիմաստ և զզվելի ֆարսը, վոր կաչանում եր նրանում, վորպես-զի կարմիր լարիկ կացրվի ալդ սպիտակ գվարդիա-կանին, վորը միայն հպատակվել եր իշխանության հրամանին և հուսահատորին կռվում ե, մնալու հա-մար այն, ինչ վոր ե ինքը, վերջնականապես մերկաց-ված ե մարդասպանի քաղաքական կարյերան բնու-թագրող անդիճելի փաստերի հանդեպ:

Դա հեղափոխության կողմից եքսպոպը իշխացի յեն-թարկված խոշոր կալվածատիրոջ զավակ ե, վոր ստեղ-ծել ե եքսպրոպը իշխացի լենթարկված սպիտակ գվար-դիականների կուսակցություն («Կանաչների» գյուղա-ցիական կուսակցություն, ոռուսական ֆաշիստական կուսակցություն): Այդ կուսակթության ֆաշիստական ծրագիրը, վորի նպատակն ե Ռուսաստանի հետ պա-տերազմը, վոչ վորի համար զաղոտնիք չեր:

Այդ ծրագիրը հրապարակված եր 1930 թվին «Մուլ» (զեկ) և 1931 թվին «Վերածնունդ» (Վօրօյ-դենի) թերթում: Գորգուլովը քաղվածքներ ե հրա-պարակել Ռուսաստանի ղեմ պատերազմելու ծրագրից: «Կանաչների» ծրագրի առաջին կետը կոչ ե անում պատերազմել Խորհրդային միության դեմ,

Գորգուլովը ծառաւել ե սպիտակ գվարդիական բանակում՝ վորպես կազակային սպա: Մոնոկուում (ուր կարելի յէ ապրել միմիայն Ֆրանսիական վաստի-կանության բույլիքարյամբ) գտնված նրա ուսանողա-կան զբքույկում ցարական իշխանության կնիքներ

կան: Նա անդադար ագիտացիա յէ մղել հոգուտ սպիտակ տեռորի ֆրանսիական գլխավոր շտաբի և ֆրանսիա-կան կառավարության հետ ձեռք ձեռքի տված: Նա մշտական կոնտակտի մեջ ե յեղել Ռենովի բանվոր և վոստիկան կրլուզկովի հետ, և վոստիկանական ժուր-նալիստ ժեռ լոնդոնը, վոր մեկնել եր Պրագա՝ «գործի քննության» համար, ինքը հարկադրված ե խոսոո-վանել, վոր նշանավոր տեսորիստ Յակովլեվը՝ «Նա-բատի» հրատարակիչը, վոր մշտապես լինում ե Բեր-լինի ֆրանսիական դեսպան Ֆրանսուա: Պոնսելի մոտ, յեղել ե Գորգուլովի մոտեկ ընկերը: Գորգուլովը կապ ե պահպանելիս յեղել նաև Մասլովի հետ՝ սպիտակ գվարդիական կաղմակերպության ղեկավարի հետ, և զեներալ Միլլերն ընդունել ե, վոր ինքը ճանաչում ե նրան:

Գորգուլովի հրապարակով արած հայտարարու-թյունները, այն ե՝ «Յես կամենում ելի հարկադրել Ֆրանսիային կոնֆլիկտի մեջ մտնել Ռուսաստանի հետ» («Ժուրնալ»), «Յես տեսնում ելի, վոր Ֆրան-սիան աշխատակցում ե բայլշենիկների հետ և դրա համար յես վճռեցի սպանել նրա ղեկավարին» («Ժուր-նալ»), «Յես ֆրանսիական ազգայնականների մեջ բարեկամներ ունեմ» («Պատի ժուրնալ»), «Յես կազակ եմ և պատրիոտ, յես կամենում ելի հարկադրել Ֆրան-սիային՝ կովել բայլշենիկների հետ... յես կրակեցի, վո-րովհետև Ֆրանսիան սիրում ե բայլշենիկներին», ինչ-պես և այն ամենն, ինչ Գորգուլովը զրել ե սպիտակ մամուլում և ինչ հանգում ե նրա իսկ ֆորմուլացին՝ «Պատերազմ՝ ահա ոռւս եմիքրանտների ֆրկությու-նը, կեցցե պատերազմը»,՝ ալդ ամենը լոկ արտացո-լանքն ե ընդարձակ պրովակացիայի սպիտակ գվար-

դիական կազմակերպությունների, շպիոնաժի կազմակերպման, սուտ հաղորդագրությունների, ֆալլովկաների, ոռումքեր պատրաստող և սպանություններ նախապատրաստող կազմակերպությունների, և վորի վերջին նպատակը հանգում ե այն բանին, վորպեսզի մեծ պետություններին մղեն ԽՍՀՄ-ի դեմ պատերազմելու:

Ահա վորն ե կոկորդիկոսարան արցունքների գինը, վոր թափում ելին սպիտակ գվարդիականները, յերբ բացվեց նրանց ամենից լուր և ցինիկ գործակալներից մեկի դերը:

ՅԵՍ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՄ

Կրկնում եմ, վոր այն ամենն, ինչ ասել եմ յես, չիմնված ե ճշմարտության վրա, Վոչ վոք և վոչինչ չի կարող փակել իմ բերանը: Յեթե բանտապահներն ու մարդասպանները հարձակվում են ինձ վրա, ապա դա լոկ վկացում ե այն, վոր յես արդարացի լին: Յես ինձ վրա յեմ վերցնում պատասխանատվությունն այն բանի, ինչ դըռում եմ և ինչ ուղղված ե՝ մի կողմից բոլոր աղնիվ մարդկանց, իսկ մյուս կողմից — սահմանված իշխանություններին: Բայց յես գիտեմ, վոր իմ ձայնն արտահայտում ե ամբողջ աշխարհում սփոված մասաւերի կարծիքը, և վորի ուժն աճում ե որեցոր: Այդ մասսայի և այդ ուժի անունից յես հայտարարում եմ այդ մասին ֆրանսիական հանրապետության պրեզիդենտին, վորը սպանվածի հաջորդն ե, մինհստրների խորհրդի նախագահին և բոլոր նրանց, ովքեր կանգնած են ֆրանսիայի դատական ապարատի գլուխի:

Ես պահանջում եմ ձերբակալել կառավարության

գլուխի կանոնած անձանց, վորոնց լավ հայտնի յեն սպիտակ գվարդիականների արարքները և մեղսակից են տեղի ունեցած քաղաքական սպանություններին:

Ես պահանջում եմ պահումանկ անել յեզ ձերբակալել վոստիկանուրյան պրեմեեկս Կյապպին, վորը ճանաչում եր վոստիկանության հետ հարաբերություն ունեցող մարդասպանին, վորը գիտեր բոլոր արտահայտված սպառնալիքների մասին և վոլինչ չի արել հմնրապետության պրեզիդենտին պաշտպանելու համար և ամենից ավելի պատասխանատու յե նրա բռնի մահվան մեջ:

Ես պահանջում եմ ձերբակալել սպիտակ գվարդիական լիդերներ Կերենսկուն, Միլերին յեզ Յարլոնվիլսկուն, վորոնք ներշնչում և ջատագովում են սպանությունները, ագիտացիա յեն մղում ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ առաջ բերելու և Ֆրանսիան դարձրել են իրենց կենտրոնական վորչը:



2468

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԵս մեղադրում եմ	3
Պետություն պետության մեջ	5
Սպիտակ բանդիաները հրաձգության են վարժվում	8
Ոձի բներ	11
Սպիտակ դվարդիական կերենսկին	14
«Սպանիր» և սպանությունը տեղի յե ունենում	17
Սպիտակ բանդիաները փոխում յեն տակտիկան	18
Ստոր խոստովանություններ	20
Սպանության բացահայտ կոչ	23
Գրովակացիա Մանջուրիայում	24
Ինտերվենտների պլաններին համապատասխան	26
Գատերազմ տռաջ բերելու համար	28
Գորգուլովը սպիտակ դվարդիական ե	29
Քնություն, վորը կատարվեց փաստերը խեղաթյուելու հիման	
վրա	32
Կապը զլխավոր շտաբի և ֆրանսիական կառավարության հետ	34
ԵԵս մեղադրում եմ..	36

«Ազգային գրադարան



NL0198441

Գիր 30 և.



Ա. ԲԱՐԲՅՈ
Я ОБВИНИЯЮ

Госиздат ССР Армении
Эривань — 1933 г.